

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ**

20.10.2014 06:41




Տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզային համակարգողների հանդիպում: Հանդիպման ընթացքում մարզային համակարգողները փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին են ներկայացրել յուրաքանչյուր մարզում առկա խնդիրները կապված փաստաբանության զարգացման հետ և այդ հարցերի շուրջ քննարկվել է ընդհանուր մարտավարությունը: Քննարկման մասնակիցները մարզերում անհրաժեշտ են համարել այնպիսի միջոցառումներ իրականացնել, ինչը կնպաստի`

- փաստաբանների համարձակ գործելաոճին.
- իրավապահ մարմինների կամ այլ պաշտոնատար անձանց կողմից փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու դեպքերը բացառելուն.
- գրասենյակներ չունեցող փաստաբաններին մեկ գրասենյակի ներքո համախմբելուն.
- հանրային պաշտպանի մարզային գրասենյակի արդյունավետության բարձրացմանը.
- փաստաբան-հասարակություն կապի ամրապնդմանը` նաև անվճար իրավաբանական խորհրդատվություններ կազմակերպելու միջոցով: Հիշեցնենք, որ մարզային համակարգողների երկու գրասենյակներ են բացվել: Առաջինը` Արմավիրի մարզային համակարգողի գրասենյակը` Էջմիածին քաղաքում, իսկ երկրորդը` Արարատի մարզային համակարգողի գրասենյակը` Արտաշատ քաղաքում: Այս գրասենյակներում համապատասխան աշխատանքային պայմաններով են ապահովվել փաստաբանների մի մասը, ովքեր չունենին գրասենյակային պայմաններ: Միաժամանակ, գրասենյակները հասանելի են լինելու բոլոր փաստաբանների համար, ովքեր մարզերի դատարաններում կամ այլ մարմիններում գործեր են վարելու:

Մոտ ապագայում նախապատրաստվում են գրասենյակներ բացել Շիրակի և Լոռու մարզերում:




## Առաջարկվող նորություններ




**25.10.2013** Ռոմիսյանի  
Փաստաբանների  
Գիլդիայի նախագահի  
Գրոհիթթոնը՝ ՀՀ  
Փաստաբանների Պալատի  
Նախագահին



**06.11.2013** Արթուր  
Հոփզանյանի  
Նշանակվել է ՀՀ  
Փաստաբանների Պալատի  
Նախագահի Առաջին  
Տեղակալ



**27.02.2014** ՀՀ  
Փաստաբանների Պալատի  
Նախագահի  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՊՎԱԾ ԼՅՈՒՔՍ  
ՍՏԵՓԱՆՅԱՆԻ  
ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ  
ԿԱՅԱՑԱԾ ԴԱՏԱԿԱՆ  
ՆԻՍՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ  
ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏ



**04.03.2014** Կարգադաշնակ  
Վարդիթթ է Հարոհիթթել  
Փաստաբան Արշակ  
ՀարոհիթթոնիՅԱՆԻ  
ՆԿԱՄԱՄԲ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })